



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ**

« 10 » նոյեմբերի 2017 թ.

№ 2/3977-Ն

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**Գ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, Հ.ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ԵՎ Դ.ԱԹՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Ծառայողական պարտականությունների նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքի համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ստուգումների թիվ 13 բաժնի պետի տեղակալ Գառնիկ Պետրոսյանին, նույն բաժնի գլխավոր հարկային տեսուչներ Հրաչ Ծատուրյանին և Դանիել Աթոյանին հայտարարել «ԲԱՆԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»:

Հիմք՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Ներքին անվտանգության վարչության պետ Ա. Սարգսյանի զեկուցագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա. Վարդանյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



*[Handwritten signature]*

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ